

ԵՊՀ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Կենտրոնի ռազմավարությունը

1. Ուսումնասիրել ՀՀ հանքահումքային և ջրային ռեսուրսների նպատակային, արդյունավետ ու անվտանգ օգտագործման ուղիները՝ երկրի առջև ծառայած սոցիալ-տնտեսական խնդիրները լուծելու և կայուն զարգացումն ապահովելու նպատակով, բավարարելով ներկայիս պահանջները և չվտանգելով ապագա սերունդների հնարավորությունները լիարժեք օգտվելու նշված բնական ռեսուրսներից:
2. Աջակցել ՀՀ Կառավարությանը ՄԱԿ-ի Կայուն Զարգացման փաթեթի իրագործմանն ազգային և տեղական մակարդակներում, ապահովելով հանրության մասնակցությունը շրջակա միջավայրի հարցերի քննարկման և որոշումների ընդունման բոլոր փուլերում:

Կենտրոնի գործողությունների ծրագիրը

1. Վերլուծել ՀՀ օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման ներկայիս պայմանները, հանքաքարերի համալիր մշակման մակարդակը, լեռնահանքային թափոնների անվտանգ պահպանման և երկրորդային օգտագործման հնարավորությունները: և ուղղված միջոցառումների անցկացման:
2. Հանքահումքային ռեսուրսների արդյունահանման և լեռնահանքային թափոնների ծավալների կրճատման խնդիրների լուծման նպատակով գտնել տնտեսապես նպատակահարմար տեխնոլոգիաներ, որոնք միաժամանակ կնպաստեն շրջակա միջավայրի աղտոտման նվազեցմանն ու բնական միջավայրի պահպանմանը:
3. Ուսումնասիրել ՀՀ տարածքի ջրային ռեսուրսների կառավարման ներկայիս վիճակը, վերհանել այդ խնդրում գոյություն ունեցող բացթողումները, որոնք առաջ են բերում ոռոգվող հողատարածքների ոչ լիարժեք օգտագործմանը, բնակչությանը բավարար ծավալով խմելու ջրով ապահովմանը: Տալ առաջարկություններ ջրային ռեսուրսների օգտագործման, պահպանմանն ու կառավարմանն ուղղված միջոցառումների բարելավման ուղղությամբ, որոնք կնպաստեն նաև անապատացման դեմ պայքարին:
4. Ուսումնասիրել հանքավայրերի մշակման և ջրային ռեսուրսների օգտագործման համաշխարհային առաջատար փորձը և վերջինիս կիրառման հնարավորությունները ՀՀ-ում:
5. Կազմակերպել կլոր սեղաններ, քննարկումներ և սեմինարներ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ՝ կառավարությանը համապատասխան քաղաքականության ու ծրագրերի հարցում աջակցելու նպատակով:
6. Հզորացնել ԵՊՀ կարողությունները և որպես գիտաուսումնական, հետազոտական բարձր ռեսուրսային կենտրոն, իրականացնել Ռիոյի սկզբունքներին համահունչ զարգացման համապատասխան ծրագրեր: